Լրացուցիչ համաձայնագիր թիվ 1
27.02.2026թ.-ին կնքված թիվ PDU-252-02-26
Փոստային ծառայությունների մատուցման
պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք. Երևան 06.03.**2026թ.**

«ՀԱՅՓՈՍՏ» փակ բաժնետիրական ընկերությունը, որը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, գրանցված է և գտնվում է Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, 0061, Արշակունյաց 65/5 հասցեում և հանդիսանում է Հայաստանի Հանրապետության փոստային կապի նշանակված ազգային օպերատոր (այսուհետ նաև՝ «Ընկերություն»)՝ ի դեմս Կորպորատիվ Հաճախորդների սպասարկման և վաճառքների զարգացման վարչության ղեկավար Գուրգեն Բաղդասարյանի, մի կողմից, ով գործում է Ընկերության գլխավոր գործադիր տնօրենի՝ 26.06.2025թ.-ի թիվ Լ-ԵԼ-ՀՓ/261-25 Լիազորագրի հիման վրա և Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը (այսուհետ նաև՝ «Հաճախորդ» կամ «Պատվիրատու»)՝ ի դեմս գլխավոր քարտուղար Արտակ Մանգասարյանի, մյուս կողմից, (այսուհետ Ընկերությունը և Հաճախորդը միասին կհիշատակվեն որպես «Կողմեր») կնքեցին սույն լրացուցիչ համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

Ընկերությունը և Հաճախորդը համաձայնության են գալիս 27.02.2026թ.-ին կնքված թիվ PDU-252-02-26 Փոստային կապի ծառայությունների մատուցման պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. Պայմանագրի 3.3 կետով սահմանվում է բառից հետո 3 240 000 (երեք միլիոն երկու հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն բառերը 4 000 000 (չորս միլիոն) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ բառերով:

   Պայմանագրի 6.6-6.8. ենթակետերը փոփոխել և շարադրել հետևյալ խմբագրությամբ.

   «6.6.Սույն գլխի 6.3 կետում նշված չհանձնված փոստային առաքանիները վերադաձվում են փոստային բաժանմունք, որտեղ նշված առաքանիները պահվում են 15 (տասնհինգ) օր: Սույն կետում նշված տասնհինգօրյա ժամկետի ընթացքում հասցեատերը (հասցեատիրոջ ներկայացուցիչը) կարող է ներկայանալ փոստային բաժանմունք և ստանալ փոստային առաքանին:

   6.7.Տասնհինգօրյա ժամկետը լրանալուց հետո չհանձնված փոստային առաքանին Ընկերությունը սույն պայմանագրով սահմանված կարգով վերադարձնում է Հաճախորդին՝ նշելով չհանձնման պատճառը, որը լրացվում է CN 15 ձևաթղթի վրա:

   6.8.Սույն գլխով նախատեսված առաքանիների պահման տասնհինգօրյա ժամկետը Հաճախորդի գրավոր պահանջով կարող է կրճատվել և սահմանվել Ընկերության կողմից առաջարկվող այլ ժամկետ»:
2. Սույն լրացուցիչ համաձայնագիրը հանդիսանում է 27.02.2026թ.-ին կնքված թիվ PDU-252-02-26 Փոստային կապի ծառայությունների մատուցման պայմանագրի անբաժանելի մասը:
3. Սույն լրացուցիչ համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից և սույն համաձայնագրի պայմանները կիրառվում են մինչև սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելը Կողմերի միջև 01.12.2025թ.-ից փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ (քաղ. օրենսգրքի 441 հոդված, 2-րդ մաս):
4. Սույն լրացուցիչ համաձայնագիրը կազմված է հայերեն, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող 2 (երկու) օրինակից: Համաձայնագրի 1 (մեկ) օրինակը մնում է Ընկերության մոտ, իսկ 1 (մեկ) օրինակը

տրվում է Հաճախորդին:

5. Կողմերի իրավաբանական հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

Ընկերություն՝

«Հայփոստ» ՓԲԸ
ք.Երևան, 0061, Արշակունյաց 65/5
ՀՎՀՀ՝ 02507464
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1930003703156000
Հեռ.՝ (010) 544-444

Կորպորատիվ Հաճախորդների սպասարկման և վաճառքների զարգացման վարչության ղեկավար՝

Գուրգեն Բաղդասարյան ----------
/ստորագրություն/

Պատվիրատու՝

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ք. Երևան, Կառավարական տուն 3
ՀՎՀՀ՝ 01506515
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ՝ 900011019321
Հեռ.՝ (010) 543-160

Գլխավոր քարտուղար

Արտակ Մանգասարյան ----------
/ստորագրություն/